# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11» փետրվարի 2020 թվականի N 06 - Ա

### 06-086-0117-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար 06-086-0117-0001 ծածկագրի տակ հաշվարկվել է 0,49581հա հողամաս, սակայն ՀՀ Կառավարության 2005թվականի հունիսի 9-ի թիվ 838-Ն որոշմամբ համայնքին չի հանձնվել,գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, բայց նկատի ունենալով, որ տվյալ հողամասը տնօրինում, տիրապետում և օգտագործում է համայնքը ուստի ղեկավարվելով անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 10.06.2010թվականի, թիվ 186-Ն հրամանագրով, և հիմք ընդունելով Շենավան համայնքի ավագանու 11.02.2020թվականի <<Հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 10-Ա որոշումը

Որոշում եմ

1.Ճանաչել Շենավան համայնքի սեփականության իրավունքը 06-086-0117-0001 ծածկագրի տակ գտնվող 0.49581հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասի նկատմամբ:

2. Սույն որոշման մեջ օրինակը տրամադրել Լոռու կադաստրային մարզային ստորաբաժանում որպես հիմք տվյալ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունք գրանցելու համար:

Համայնքի ղեկավար Ս.Մխիթարյան